Վաղ նեցված բումերանգը վերադառնում է

Արամ ՎԻՐԱԲՅԱՆ

Արդեն առիթ ունեցել ենք խոսելու այն մասին, որ ղարաբաղյան հակամարտության բանակցություններում օրավուր իր դիրքորոշումը կոշտացնող Բաքվին հայկական կողմը կարող էր հակադրել միայն մեկ կենսունակ գործոն: Այն է՝ Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովրդավարացումն ու պետական-հասարակական կյանքի բոլոր ոլորտների ազատականացումը: Անվիճելի է, որ ի շարս իրավական եւ պատմաքաղաքական բազում այլ փաստարկների, դա, ինքնին, հզոր հաղթաթուղթ կհանդիսանար Լեռնային Ղարաբաղը ավտորիտար Ադրբեջանին ենթարկեցնելու անհնարինությունն ապացուցելու գործում: Ընդ որում, այդ հաղթաթղթի ուժն այնքան ակնհայտ էր, որ դրա արդյունավետությունը, մի շարք առիթներով, ընդունել են անգամ իրենք՝ ադրբեջանցիները:

Վստահաբար, հենց դա է պատճառը, որ վերջին շրջանում ադրբեջանական կողմն անսքող ուրախություն է ապրում այն ամենից, ինչ տեղի ունեցավ Հայաստանում: Իսկ Հայաստանում տեղի ունեցավ մի բան, ինչը մի քանի օր առաջ շատ դիպուկ կերպով ձեւակերպեց Բաքվի «Զերկալո» օրաթերթը: Անդրադառնալով Հայաստանի հետընտրական իրադարձություններին ու ԵԽԽՎ-ի շրջանակներում ընթացող քննարկումներին, ադրբեջանական պարբերականն իր ընթերցողներին ավետեց. «Մարտի 1-ին տեղի ունեցած դեպքերի արդյունքում հայերը կորցրին իրենց գլխավոր փաստարկներից մեկը, թե Ադրբեջանում դեմոկրատիայի բացակայությունը թույլ չի տալիս Լեռնային Ղարաբաղի հարցը կարգավորել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքով: Ադրբեջանը կարող է օգտագործել այդ հաղթաթուղթը»:

Ադրբեջանական կողմի համար հրաշալի այս պատեհությունը, բնականաբար, չէր կարող անտարբեր թողնել նաեւ այդ երկրի նախագահին: Ինչպես փոխանցում է ռուսաստանյան ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, նախօրեին, ելույթ ունենալով Ֆիզուլիի շրջանի փախստականների առջեւ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը մեղադրել է Արեւմուտքին Հայաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու մեջ:

«Պետությունները, որոնք իրենց անվանում են ժողովրդավարության խորհրդանիշ եւ ուրիշների վզին են փաթաթում ժողովրդավարական սկզբունքները, չարձագանքեցին հարեւան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, որոնց արդյունքում արտակարգ դրություն հայտարարվեց, սպանվեցին տասնյակ խաղաղ բնակիչներ: Մինչդեռ, երբ Ադրբեջանում, որտեղ ապահովված է ժողովրդավարությունը, աննշան միջադեպեր են տեղի ունենում, աղմուկ է բարձրացվում, թե երկրում խախտվում են մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունը»,- մասնավորապես հայտարարել է Իլհամ Ալիեւը:

Իհարկե, սպասելի է, որ հիմա Հայաստանում եռանդուն, բայցեւ՝ միանգամայն անպտուղ վեճեր կսկսվեն այն հարցի շուրջ, թե որքանով է Ալիեւը ճիշտ կամ սխալ: Հուզախռով եւ զայրալից

փաստարկներ կհնչեն ադրբեջանական դիկտատուրայի «իրական դեմքի» եւ հայկական ժողովրդավարության «շահեկան առաջընթացի» մասին: Սակայն նրանք, որոնց հասցեագրված կլինեն այդ փաստարկները, լավագույն դեպքում քմծիծաղով կվերաբերվեն դրանց: Արեւմուտքի համար հուզական պատճառաբանությունները, ինչպես հայտնի է, ոչինչ չարժեն: Նրանք հաշվի են նստում բացառապես փաստերի հետ: Տվյալ դեպքում՝ դրանք մարտի 1-ին Հայաստանում արձանագրված փաստերն են: Փաստեր, որոնք կարող էին տեղի չունենալ ու այդպիսով՝ «լեզու չդնել» ադրբեջանական քարոզչության բերանում: